ՆԱԽԱԳԻԾ - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«_____» _____ 2011թ. N _____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35-րդ գլխի կանոններով, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 18-րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 36-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները, 2010 թվականի նոյեմբերի 26-ի N162-Ն որոշման 3-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Անդրանիկի փողոցի թիվ 37/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության 731.6քմ մակերեսով տարածքը և դրա զբաղեցրած 1392.46քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 30.05.2011թ. հ.2768763 վկայական/ վարձակալության իրավունքով 5 /հինգ/ տարի ժամկետով տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:
2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝

1) տրամադրվող տարածքի 1 /մեկ/ քառակուսի մետրի համար տարեկան վարձավճար սահմանել 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ.

2) տրամադրվող հողամասի 1 /մեկ/ քառակուսի մետրի համար տարեկան վարձավճար սահմանել հողամասի կադաստրային արժեքի 5 /հինգ/ տոկոսի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն դիմել է Երևանի քաղաքապետարան Մալաթիա-Սեբաստիա հարկային տեսչության կողմից օգտագործվող Անդրանիկի փողոցի հ37/1 հասցեում գտնվող տարածքը վարձակալության իրավունքով տրամադրելու խնդրանքով:

Նշված հասցեում գտնվող հասարակական նշանակության տարածքում Շահումյանի շրջխորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի մարտի 3-ի հ.3/3 և Մալաթիա-Սեբաստիայի թաղապետի 2001 թվականի հունիսի 8-ի հ.138 որոշումների համաձայնգործունեություն է իրականացրել Շահումյանի հարկային, իսկ այնուհետև մինչ օրս Մալաթիա-Սեբաստիայի հարկային տեսչությունները: Կնքվել են վարձակալության պայմանագրեր, որոնք կազմակերպության օգտագործման իրավունքի պետական գրանցում չեն ստացել:

<<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ավագանու ընտրությունից հետո, այդ պահին Երևանի թաղային համայնքների սեփականություն համարվող գույքը սեփականության իրավունքով փոխանցվել է Երևանին և Երևանը համարվում է Երևան քաղաքի թաղային համայնքների իրավահաջորդը:

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 30-րդ կետով վարձակալության տրամադրվող գույքի /տարածքի/ ամսական վարձավճարի չափը որոշվում է ՀՀ կառավարության 2001 թվականի փետրվարի 2-ի N125 որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

Քննարկվող տարածքի վարձավճարը նախկինում սահմանված է եղել 1քմ-ի համար տարեկան 1000 /հազար/ ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերը նշվածը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հայտը, ներկայացվում է Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 37/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության տարածքը և դրա զբաղեցրած հողամասը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 30.05.2011թ. հ.2768763 վկայական/ վարձակալության իրավունքով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրելու մասին Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 37/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության տարածքը և դրա զբաղեցրած հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» որոշման ընդունման առնչությամբ առաջանում է «Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 37/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության տարածքը և դրա զբաղեցրած հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» Երևանի քաղաքապետի որոշում կայացնելու անհրաժեշտություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 37/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության տարածքը և դրա զբաղեցրած հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում։

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ